

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ

Բաց Բաժնետիրական Ընկերություն

ՀՀ, ք. Երևան, Պուշկինի 19, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ araratbank@araratbank.am

Հաշվետվություն թիվ 01, 16.01.2019թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ժողով հրավիրելու մասին ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2019 թվականի հունվարի 15-ի թիվ 01/03Լ-Հ Որոշում (ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի որոշումը կցվում է):



ք. Երևան

Կոդ: ՈՐԽ0102 – N 01/03L-Հ

Դաս: ՀՊ

«15» հունվարի 2019թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 84-ի 1-ին մասի բ)-ից դ) կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21⁶-ի 1-ին մասի բ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի բ) ենթակետը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Հրավիրել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ (այսուհետ՝ ժողով) 2019 թվականի փետրվարի 04-ին՝ որոշումների ընդունման հեռակա քվեարկության (հարցման) եղանակով:
2. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2019 թվականի հունվարի 15-ը:
3. Հաստատել ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով:
5. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 2-ի:
6. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 5-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Պուշկինի 19), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
7. Հաստատել օրակարգի հարցի վերաբերյալ քվեաթերթիկների ձևը՝ համաձայն Հավելված 3-ի:
8. Ժողովի օրակարգի հարցերի վերաբերյալ լրացված քվեաթերթիկների ընդունումն ավարտել 2019 թվականի փետրվարի 04-ին ժամը 17:00-ին:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:


Խորհրդի նախագահ

Արգիկ Սուվարյան

Իսկականի հետ ճիշտ է
Աշխատակազմի ղեկավար՝

Մ.Ուզունյան



	Որոշում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու մասին	Կոդ: ՀՎԾ/ՈՐԽ0102 – 01/03Լ-Հ Դաս: ՀՊ Ամսաթիվ: «15» հունվարի 2019թ.
---	---	---

Հավելված 1

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2019 թվականի փետրվարի 04-ին կայանալիք ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամ Յան Դիվայնգարթի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
2. Լիազորությունները վաղաժամկետ դադարեցվող Յան Դիվայնգարթի փոխարեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամի պաշտոնում Շաբդան Տազակի ընտրության մասին: